Հաշվետվություն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ուսանողական գիտական ընկերության 2022-2023 ուստարվա գործունեության

ԵՊՀ ԻՄ ՈՒսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 9 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր, մասնավորապես՝ 4 դասընթաց-քննարկում հետևյալ թեմաներով՝ «Մարդու իրավունքները», «Հետազոտական աշխատանք գրելու հմտությունները», «Ավարտական աշխատանքի պատրաստման մեթոդաբանությունը», «Ծրագրավորման և մաթեմատիկական անալիզի դասավանդում», 2 ինտելեկտուալ խաղ՝ «Ամենախելացին» ձևաչափով 2 գիտական հոդվածների և էսսեների մրցույթ և 1 հոդվածաշարի շնորհանդես «ՈՒսանողները ժողովրդավարության մասին» թեմայով:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն սերտ համագործակցության մեջ է եղել ԵՊՀ ԻՄ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի, Ռեստարտ Իջևան գիտակրթական հասարակական կազմակերպության, ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի և Եվրամիության գրասենյակի հետ:

2022-23 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականցվել է «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը ,որի շրջանակներում մասնաճյուղի տարբեր ֆակուլտետներից մասնակցել են 9 ուսանողներ: Նույն կիսամյակում Եվրասիա համագործակցության հիմնադրամի հովանավորությամբ և ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ՝ մասնավորապես Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դասախոսների ուղեկցությամբ իրականացվել են թվով 5 մասնագիտական արշավներ Տավուշի մարզի տարբեր տարածաշրջաններում, որոնց մասնակցել են 6 դասախոսներ և 52 ուսանողներ:

Արշավներից առաջ և հետո տեղի են ունեցել հաճախակի հանդիպումներ դասախոսների և արշավականների հետ: Ծրագրի վերջում Տնտեսագիտության

ֆակուլտետի 4 և Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 1 ուսանող գրել են էսսեի տեսքով հոդվածներ «ՈՒղեցույց-խորհուրդ սկսնակ գիդերին» վերնագրով։ Հոդվածները գրվել են դասախոսների (մենթորների) օգնությամբ։ Բոլոր 5 հոդվածները տպագրվել են, իսկ հոդվածագիրները՝ պարգևատրվել։

2-րդ կիսամյակում շուրջ 3 ամիս իրականցվել է «Գիտական հոդվածների մրցույթ» Ռեստարտ Իջևանի հետ համագործակցությամբ, որի շրջանակներում տարբեր ֆակուլտետների 7 ուսանողներ իրականացրել են հետազոտական աշխատանք ժողովրդավարության, ուսանողական ինքնակառավարման, բուհական ինքնավարության երիտասարդության որոշումների կայացման գործընթացում ներգրավման և այլ թեմաների շրջանակում։ Հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում ուսանողներին աջակցել են ընտրված թեմաների շրջանակում հետազոտություն իրականացրած մենթորներ։ Աշխատանքները վերածվել են հոդվածների, իսկ աշխատանքների ամփոփումից հետո գնահատման խմբի կողմից առանձնացվել են լավագույն 3 հոդվածները, հոդվածագիրները արժանացել են անվանական կրթաթոշակի, իսկ միայն 4 հոդված տպագրվել է։

2-րդ կիսամյակում մասնաճյուղում տեղի է ունեցել նաև հանդիպում-քննարկում Կլոր սեղան կազմակերպության անդամների հետ, որին ներկա է եղել 18 ուսանող։ ՈՒսանողները վեր են հանել մարզի կարևոր և ակնառու հիմնախնդիրները, փորձել են գտնել այդ խնդիրներից ազատվելու հավանական ուղիները։ Կիսամյակի ընթացքում Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի հետ հաճախակի կազմակերպվել են դասընթացներ, որոնք ուղղորդել են ուսանողներին հետազոտական և ավարտական աշխատանքներ գրելիս։ «Հետազոտական աշխատանք գրելու հմտությունները» դասընթացին մասնակցել է 36 ուսանող, իսկ «Ավարտական աշխատանքի պատրաստման մեթոդաբանությունը» թեմայով դասընթացին՝ առկա և հեռակա համակարգում սովորող 15 ուսանող։ Կիսամյակի վերջում ԵՊՀ ԻՄ-ի պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի հետ Իջևանի՝ Գ. Անանյանի անվան ավագ դպրոցում կազմակերպվել է «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը, որին մասնակցել է 11-րդ դասարանի 12 աշակերտ։